

Այս ձեռագիրը կը լուսարանէ մասամբ իր կեանքին մէկ անյայտ մասը, թէև տակաւին մուծ կէտեր կը մնան:

Արդ՝ ծանօթացնելու համար այս անձին կեանքը, պիտի ջանանք տալ կարգ մը տեղեկութիւններ:

Օրմանեան և Չամիչեան զայն կը կոչեն Յովհաննէս Արեւելցի՝ մականուանեալ «Թիւթիւնճի», գուցէ շատ ծխող բլլալուն համար: Օրմանեան (Ազգապատում, էջ 2531) կ'ենթադրէ, որ ծննդեամբ Վասպուրականցի է:

Ես կը խորհիմ, թէ ուղղակի Վանեցի է և նոյնինքն այն անձն է, զոր կը յիշէ Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան՝ իր «Օրագրութեան» մէջ 1650 թուականին:

Երեմիա Չէլէպի (տես էջ 19) ունի հետեւեալ թերի ու կիսատ արձանագրութիւնը.

«Յաւուրս այսոսիկ Յովանես անուն վարդապետ ոմն Վանեցի եկեալ ի քաղաքս, եւ ոչ կամեիմ բնաւ բողոլ սեւազլուխ, բայց ի խնդրոյ ոմանց Վանեցոց ծանօթից նմա՝ բերիմ եւ նսաւ յեկեղեցի Սուրբ Ասուածածնին»:

Այս անորոշ արձանագրութիւնէն կը յայտնուի, թէ 1650ին արդէն վարդապետ Յովհաննէս Վանեցի գացած էր Պոլիս և հակառակ անոր, որ ոչ մէկ վեղարււորի չէին թոյլ տար Պոլիս մնալ, ծանօթ մէկ քանի Վանեցիներու խնդրանքով անիկա հաստատուած էր Ս. Աստուածածին Մայր Եկեղեցին:

Առեղծուածային չեն այս տողերը, վասնզի այդ ժամանակ պատրիարքական աթոռը խաղալիկ եղած էր քանի մը եկեղեցականներու միջև, և այդ պատճառով Պոլսեցիք 1649ին որոշած էին Պատրիարքութիւնը